ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/21

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.01.2022թ. թիվ 26/26-1/995-2022 գրությամբ «ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 13.01.2022թ. թիվ 3/27/2085-22 գրության հիման վրա, 20.01.2022թ. թիվ 26/26-1/995-2022 գրությամբ նախաձեռնել է «ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/21 ընթացակարգի շրջանակներում 26.01.2022թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.01.2022թ. թիվ 3/27/2085-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ Ձեզ է ուղարկվում ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/2022/Հ-26 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/21 ընթացակարգի շրջանակներում 26.01.2022թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4 ՍՑ-ՆԳ-2022/21 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2022/21 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/2022/Հ-26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է իրական շահառուների տվյալները՝ հավելված 1.3 և ծավալաթերթ-նախահաշիվը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ արձանագրել է, որ գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվում է և Ընկերությանը տրվում է մեկ աշխատանքային օր ժամանակ ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացնելու համար:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ոչինչ չի ներկայացվել, ուստի համաձայն Ընթացակարգի հրավերի 8.10-րդ կետի՝ Ընկերության հայտը մերժվում է:

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2022թ. թիվ 26/26-1/995-2022 գրությունը, ՀՀ ոստիկանության 13.01.2022թ. թիվ 3/27/2085-22 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/2022/Հ-26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է իրական շահառուների տվյալները՝ հավելված 1.3 և ծավալաթերթ-նախահաշիվը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ արձանագրել է, որ գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվում է և Ընկերությանը տրվում է մեկ աշխատանքային օր ժամանակ ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացնելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ոչինչ չի ներկայացվել, ուստի համաձայն Ընթացակարգի հրավերի 8.10-րդ կետի՝ Ընկերության հայտը մերժվում է:

Այսպիսով՝ գործով առկա նյութերի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***07.01.2022թ.*** նիստի թիվ 3 արձանագրությամբ «ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ի հայտում արձանագրել է անհամապատասխանություններ և ***որոշում է կայացրել նիստը կասեցնելու և Ընկերությանն առաջարկելու ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունները***, ***այնուհետև 07.01.2022թ.*** նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ***1 աշխատանքային օրը լրացած չլինելու պայմաններում, արձանագրել է Ընկերության կողմից թերությունների չշտկման փաստ և վերջինիս տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար,*** որպիսի պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել «ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.01.2022թ. թիվ 26/26-1/995-2022 գրությամբ «ՎԻ-ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**